ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2019/03

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միհեր Անանյանի ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.01.2019թ. թիվ 26-3/111-19 գրությամբ «Ռազ Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության 26.12.2018թ. թիվ 02/8401-18 գրության հիման վրա, 09.01.2019թ. թիվ 26-3/111-19 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Ռազ Շին» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Ռազ Շին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «Ռազ Շին» ՍՊԸ-ի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/03 ընթացակարգի շրջանակներում 14.01.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 26.12.2018թ. թիվ 02/8401-18 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի և «Ռազ Շին» ՍՊԸ-ի միջև 2018 թվականի նոյեմբերի 7-ին կնքվել է «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնման պայմանագիր, որի շրջանակներում «Ռազ Շին» ՍՊԸ-ն ստանձնել է 534 000 (հինգ հարյուր երեսունչորս հազար) ՀՀ դրամ ընդհանուր գումարով գրասենյակային աթոռի՝ 50 հատ (այսուհետ՝ ապրանք) մատակարարման պարտավորություն, ինչի համար կատարման վերջնաժամկետը սահմանված էր՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից հաշված 30 օրվա ընթացքում, սակայն «Ռազ Շին» ՍՊԸ-ն սահմանված ժամանակահատվածում չի կատարել ստանձնած պարտավորությունը:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.4 կետը և 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը 2018 թվականի դեկտեմբերի 25-ից միակողմանի լուծել է «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնման պայմանագիրը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/03 ընթացակարգի շրջանակներում 14.01.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ԱՄ-2019/03 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ԱՄ-2019/03 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության և «Ռազ Շին» ՍՊԸ-ի միջև 07.11.2018թ. կնքվել է գրասենյակային կահույքի մատակարարման «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով պայմանագիր, որի համաձայն «Ռազ Շին» ՍՊԸ-ն պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Պատվիրատուին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված գրասենյակային կահույք, իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. «Ռազ Շին» ՍՊԸ-ին ուղղված 26.12.2018թ. թիվ 02/8399-18 գրությամբ ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.4 կետը և 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը 2018 թվականի դեկտեմբերի 25-ից միակողմանի լուծում է «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնման պայմանագիրը:

5. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 09.01.2019թ. թիվ 26-3/111-19 գրությունը, ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության 26.12.2018թ. թիվ 02/8401-18 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. ***խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ

մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության և «Ռազ Շին» ՍՊԸ-ի միջև 07.11.2018թ. կնքվել է գրասենյակային կահույքի մատակարարման «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով պայմանագիր:

Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Ռազ Շին» ՍՊԸ-ն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Պատվիրատուին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված գրասենյակային կահույք, իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

«Ռազ Շին» ՍՊԸ-ին ուղղված 26.12.2018թ. թիվ՝ 02/8399-18 գրությամբ ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը հայտնել է, որ ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի և «Ռազ Շին» ՍՊԸ-ի միջև 2018 թվականի նոյեմբերի 7-ին կնքված «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում Ընկերությունը ստանձնել է 534 000 (հինգ հարյուր երեսունչորս հազար) ՀՀ դրամ ընդհանուր գումարով գրասենյակային աթոռի՝ 50 հատ (այսուհետ՝ ապրանք) մատակարարման պարտավորություն, ինչի համար կատարման վերջնաժամկետը սահմանված էր՝ Պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից հաշված 30 օրվա ընթացքում, սակայն պայմանագրով նախատեսված պայմաններին համապատասխան մատակարարում չի իրականացվել և Ընկերության կողմից բանավոր տեղեկացվել է՝ հետագա մատակարարումներն իրականացնելու անհնարինության վերաբերյալ:

Նույն գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.4 կետը և 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը 2018 թվականի դեկտեմբերի 25-ից միակողմանի լուծում է «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնման պայմանագիրը:

Այսպես՝ Պայմանագրի հավելված 1 տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագիրն ուժի մեջ

մտնելու պահից հաշված 30 օրվա ընթացքում Պատվիրատուին մատակարարել 50 հատ գրասենյակային աթոռ:

Պայմանագրի 8.1-րդ կետի համաձայն՝ Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

Պատվիրատուի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառվել է 09.11.2018թ.:

Պայմանագրի 2.1.7 և 2.1.7.1 ենթակետերով նախատեսվել է, որ՝

2.1.7. Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 7 օրից ավելի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Ռազ Շին» ՍՊԸ-ն ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության և Ընկերության միջև 07.11.2018թ. կնքված «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով պայմանագրի շրջանակներում սահմանված ժամկետներում ընդհանրապես չի կատարել Պայմանագրով նախատեսված 50 հատ գրասենյակային աթոռը մատակարարելու իր պարտականությունը, որի հետևանքով էականորեն խախտել է Պայմանագիրը: Գտնում եմ, որ «Ռազ Շին» ՍՊԸ-ն թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա»

ենթակետով նախատեսված պայմանագրային պարտավորության խախտում, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.01.2019թ. թիվ 26-3/111-19 գրությամբ «Ռազ Շին» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 08420204) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Ռազ Շին» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**